ԼՈՒՍԻՆԵ ՆՈՒՐԲԵԿՅԱՆ

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՄԸ Կ.ՊՈԼՍԻ ՀԱՅ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ

XIX դարի երկրորդ կեսին Օսմանյան Թուրքիայում ընթացող հասարակական վերափոխումների համատեքստում արևմտահայության համար հրատապ դարձավ ազգային մարմիններ ձևավորելու և դրանց իրավական կարգավիճակ տալու հարցը: Խոսքն առաջին հերթին Ազգային սահմանադրության մասին է: Հայ իրականության մեջ առաջին անգամ էր, որ գումարվում էր յուրովի խորհրդարան հանդիսացող, արևմտահայ համայնքի ազգային գործերով ու ներքին խնդիրներով զբաղվող Ազգային ժողովը՝ իր ընտրված երեսփոխաններով:

Եվրոպական պետությունների ճնշման արդյունքում Օսմանյան տերությունում մերթ ընդ մերթ փորձեր էին կատարվում սիրաշահել կայսրության կեղեքվող ժողովուրդներին՝ երկիրը կործանումից փրկելու համար: Այդ նպատակով 1830-1850-ական թթ. Թուրքիայում անցկացվում են չափավոր բարեՆորոգումներ, ընդունվում դրանից բխող օրենքներ: Մասնավորապես, 1839թ. նոյեմբերի 3-ին ստորագրվում է բարեՆորոգումների ծրագիրը՝ Գյուլհանեի «Հաթթը շերիֆ» («Սրբազան գիրք») կոչվող օրենսդրական ակտը [1], որով թուրքական կառավարությունն իր տերության մեջ ապրող քրիստոնյա հպատակների ազգային-ազատագրական շարժումները կանխելու, եվրոպական մեծ պետությունների միջամտությունից խուսափելու համար սկսում է բարեփոխումների և առանձնաշնորհումների քաղաքականություն իրականացնել: Չնայած այդ ակտերի օրենսդրական ձևին, դրանք մնում էին զուտ տեսական սկզբունքներ:

1856թ. փետրվարի 21-ին, Փարիզի վեհաժողովի նախօրյակին, հրապարակվում է կայսրության փոքրամասնությունների արտոնություններին վերաբերող սուլթանի շՆորհագիրը՝ բարեՆորոգումների նոր հրովարտակը «Հաթթը հումայունը»: Եթե թանզիմաթի առաջին տարբերակը կազմվել էր եվրոպացիներին մոլորության մեջ գցելու համար, ապա երկրորդն արդեն թելադրված էր արևմտաեվրոպական պետությունների կողմից:

Խոսելով Օսմանյան կայսրությունում օրենքների գործադրության մասին, Լեոն իրավացիորեն նկատում է. «Թուրքիայում ամենադժվարը, նույնիսկ անհնարինը, հենց թղթից կեանքի մէջ անցնելն էր: Թանզիմաթը մնաց իբրեւ եւրոպականացման արտաքին կեղեւ, որ հարկաւոր եղաւ թիւրք պետական

մարդկանց Եւրոպայի վստահութիւնը գրաւելու եւ նրանից պարտք վերցնելու համար» [2]:

XIX դարում Եվրոպայում ընթացող բուրժուական հեղափոխությունները, մարդասիրական, առաջադիմական գաղափարների զարգացումն ու տարածումը, այդ գաղափարներին իրավական տեսք տալը, սահմանադրական ազատ կարգեր ստեղծելու եվրոպական փորձը, ազգային-ազատագրական շարժումները, Ղրիմի պատերազմը անհրաժեշտ իրավաքաղաքական պայմաններ էին ստեղծում Ազգային սահմանադրության ձևավորման համար:

Արևմտահայերի Ազգային սահմանադրությունը ձևավորվեց սոցիալ-տնտեսական և իրավաքաղաքական բարդ, հակասական պայմաններում, որը թուրքական իշխանությունների կողմից հաստատելու համար հայությունը ոտք դրեց պայքարի մի նոր շրջան:

XIX դարի կեսին ծավալված հայոց սահմանադրական շարժումը, արտացոլելով ազգային ինքնության պահպանման, ինքնահաստատման և ինքնակառավարման համազգային ձգտումները, ընթացել է պատմա-քաղաքական բարդ իրողությունների պայմաններում, ներառել ազգային-քաղաքական տարբեր հոսանքների գործունեությունը: Սահմանադրական շարժման ընթացքում բյուրեղացել են ազգային գերխնդիրները, ճշգրտվել ակնկալվող նպատակները: Ազգային սահմանադրության ընդունումից (1860թ.) և վավերացումից (1863թ.) հետո սահմանադրական շարժումը գոյատևել է ձեռք բերված արժեքների պահպանման, սահմանադրականության գաղափարի ամրապնդման, իրավաքաղաքական մշակույթի զարգացման, սահմանադրության բարեփոխման և այլ ձևերով:

Միաժամանակ, Ազգային սահմանադրությունն արժանացել է տարաբնույթ, երբեմն իրարամերժ գնահատականների՝ կախված սահմանադրությունից ունեցած ակնկալիքներից, ազգային խնդիրների փաստարկման ու լուծման եղանակների տարբերություններից, ազգային մտածողների հայեցակարգային մոտեցումներից և այլն:

Նախ նշենք, որ սահմանադրություն անվանումն իրականում չէր համապատասխանում մերօրյա սահմանադրական իրավունքի ըմբռնմանը: Մարդու բնական իրավունքների վրա հիմնված սահմանադրականության հայեցակարգի համաձայն, սահմանադրության ընդունումը նպատակ է հետապնդում ուրվագծել իշխանության իրականացման սահմանները, սահմանափակել դրանք որոշակի շրջանակներով, որից դուրս գալը կդիտվեր իբրև կամայականություն և քաղաքացիների իրավունքների խախտում: սահմանադրության ընդունման

հետևանքով պետությունը սահմանափակում է իր իշխանությունը, որի հետևանքով այն դադարում է բացարձակ լինելուց:

Այս առումով, 1860թ. մայիսի 24-ին ընդունված Ազգային սահմանադրության նպատակն էր կազմակերպել կրոնական և աշխարհիկ մի հաստատություն, որի իրավասությունները, սակայն ավարտվում էին այնտեղ, որտեղ սկսվում էին պետության իրավունքները: Սակայն նշված հանգամանքը բոլորովին էլ չի արժեզրկում Ազգային սահմանադրությունը: Ավելին, որպես քաղաքական փաստաթուղթ, սահմանադրությունը կարգավորում էր ազգային, հոգևոր, կրթական գործընթացները: Այն կազմված էր ժողովրդավարական սկզբունքներով, բաղկացած էր ընդարձակ առաջաբանից և 150 հոդվածներից:

Ազգային սահմանադրությամբ ընտրվում էին 220 երեսփոխաններ (հոդվ. 9), որոնցից 160-ը Կ.Պոլսի թաղերից, իսկ 60-ը գավառներից, հրավիրվում 140 անդամակիցներ: Անդամակիցները հայ ազգային, պետական, կրթական, հոգևոր պաշտոնյաներն էին, որոնք իրավունք ունեին առանց ընտրվելու մասնակցել Ազգային ժողովի նիստերին (եպիսկոպոսներ, պետական հայ պաշտոնյաներ, ազգային մատենագիրներ, ավագ ուսուցիչներ, թերթերի գլխավոր խմբագիրներ և այլն) [3]:

Առանձին հոդվածներով սահմանվում էր աշխարհիկ և կրոնական մարմինների, պաշտոնյաների ընտրության կարգը, նրանց իրավունքներն ու պարտականությունները: Ակտիվ ընտրական իրավունք սահմանվում էր 25 (հոդվ. 89), իսկ պասսիվ 30 տարին լրացած անձանց համար (հոդվ.91): Ազգային մարմիններն ընտրվում էին գաղտնի քվեարկությամբ (հոդվ.101) և ձայների մեծամասնությամբ (հոդվ. 107): Ակտիվ և պասսիվ ընտրական իրավունքից զրկվում էին քրեական հանցագործները, նախկին դատապարտյալները, որևէ ազգային ատյանի կողմից ընտրելու իրավունքից զրկված անձինք, ինչպես նաև հոգեկան հիվանդները (հոդվ.90): Կազմվում էին Կրոնական և Քաղաքական ժողովներ, որոնց միացյալ ընտրությամբ ստեղծված Գերագույն ժողովն օժտված էր օրենսդիր գործառույթներով: Այն վերընտրվում էր 5 տարին մեկ անգամ (հոդվ.132): Հիմնվում էին ուսումնական, տնտեսական, դատաստանական, վանքերի և թաղական խորհուրդներ, ազգային-գավառական վարչություն, ելևմտից, կտակների, հիվանդանոցների հոգաբարձություն և այլն [4]:

1863 թվականին թուրքական իշխանությունների կողմից Ազգային սահմանադրության վավերացումը տեսականորեն նշանակում էր, որ պետությունն այդ փաստաթղթով ուրվագծված շրջանակներում պարտավորվում է սահմանափակել իր իրավունքները և ընդունում հայ համայնքի ներքին գործերը տնօրինելու իրավունքը: Վավերացված սահմանադրությանը բաղկացած էր հիմնա-

կան սկզբունքներից և 99 հոդվածներից: Այստեղ նվազեցված էր եկեղեցու, պատրիարքի և հոգևորականության դերն Ազգային ժողովում: Այս իրողությունը, ինչպես իրավացիորեն նկատում է Ա. Խառատյանը, արտացոլում էր միլեթներում (հայ, հույն, հրեա) եկեղեցու ազդեցությունը թուլացնելուն և ապա վերացնելուն ուղղված օսմանիզմի գաղափարախոսության նպատակը, այն է՝ այդ հանրությունները հեռացնել իրենց դավանություններից և նախապատրաստել նրանց օսմանյան, մահմեդական զանգվածի մեջ ձուլելու գործը [5]:

Սահմանադրությունը բարձրագույն ներկայացուցչական մարմին էր հռչակում Ազգային ժողովը, որը միապալատ խորհրդարան էր՝ բաղկացած 140 երեսփոխանններից: Նրանցից 20-ն ընտրվում էր Կ.Պոլսի եկեղեցականներից, 80-ը աշխարհիկ անձանցից, 40-ը գավառներից (հոդվ. 57): Փաստորեն 100 երեսփոխանական տեղ սահմանվում էր միայն Կ.Պոլսին: Այդպիսի անհամամասնությունը պայմանավորված էր հայ հասարակական-քաղաքական կյանքում Կ.Պոլսի խաղացած նշանակալի դերով:

Ազգային ժողովն իրականացնում էր մի շարք գործառույթներ. հասարակական հարաբերությունների նորմատիվ կարգավորում, տնտեսական և սոցիալ-մշակութային խնդիրների լուծում, ազգային մարմինների ձևավորում, պատրիարքի գործունեության, Կրոնական և Քաղաքական ժողովների և նրանց կողմից ձևավորված մարմինների գործունեության վերահսկողություն, բյուջեի ընդունում և դրա կատարման մասին հաշվետվության հաստատում, կաթողիկոսական ընտրությունների մասնակցություն:

Գործադիր իշխանության կամ ազգային վարչության համակարգի մեջ էին մտնում Քաղաքական և Կրոնական ժողովները: Կրոնական ժողովը 14 եկեղեցականներից բաղկացած կոլեգիալ մարմին էր, որի անդամ կարող էին լինել 30 տարին լրացած և առնվազն 5 տարի ձեռնադրված կրոնականները: Այս մարմինն ընտրվում էր Ազգային Ընդհանուր ժողովի կողմից՝ գաղտնի քվեարկությամբ և երկու տարի ժամկետով (հոդվ. 24-25): Կրոնական ժողովի իրավասությունները տարածվում էին հոգևոր ոլորտի վրա, որին հանձնարարված էր ազգային-կրոնական գործերի տեսչությունը: Այն հսկում էր ազգային վարժարաններում քրիստոնեական ուսմունքի դասավանդմանը, պատրաստում էր կրոնական գործիչներ, վարդապետներ ու քահանաներ, լուծում էր կրոնական վեճեր:

Քաղաքական ժողովը կոլեգիալ գործադիր մարմին էր՝ բաղկացած ազգային գործերին և պետության օրենքներին բանիմաց քսան աշխարհիկ անձանցից (հոդվ. 36): Չնայած իր քաղաքական անվանը, այս մարմինն ըստ էության, այդպիսին չէր: Քաղաքական բառն այստեղ ընդգծում էր նրա աշխարհիկ

բնույթը՝ ի հակակշիռ կրոնականի: Ազգային ժողովի նիստերի արձանագրությունների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ այն առավելապես զբաղվել է սոցիալական, կրթական, մշակութային և տնտեսական հարցերով:

Քաղաքական ժողովը մշտապես գործող մարմին էր, որն ընտրվում էր երկու տարի ժամկետով Ընդհանուր ժողովի կողմից գաղտնի քվեարկությամբ և ձայների բացարձակ մեծամասնության սկզբունքով: Ընտրված անձինք պատրիարքի կողմից ներկայացվում էին Բ.Դռանը և հաստատվում սուլթանի կողմից: Քաղաքական ժողովի նախագահը պատրիարքն էր, սակայն ժողովն անմիջականորեն ղեկավարում էր ատենապետը, որն ընտրվում էր ժողովի անդամներից:

Քաղաքական ժողովը երկու տարի ժամկետով կազմում էր չորս խորհուրդներ՝ ուսումնական, տնտեսական, դատաստանական, վանորեից և երեք հոգաբարձություններ՝ ելևմտից, կտակաց, հիվանդանոցի:

Ազգային ինքնակառավարման համակարգում ուրույն տեղ է զբաղեցնում պատրիարքը: Ազգային սահմանադրության առաջին հոդվածով պատրիարքը Ազգային ժողովի նախագահն էր, գործադիր իշխանության գլուխը և միջնորդը հայության և Օսմանյան պետության միջև [6]: Պատրիարքի պարտականությունն էր գործել սահմանադրության սկզբունքներին համապատասխան և հսկել նրա բոլոր հոդվածների ճշգրիտ գործադրմանը (հոդվ. 8): Պատրիարք կարող էր ընտրվել 35 տարին լրացած, ազգի վստահությունն ու հարգանքը վայելող օսմանահպատակ եպիսկոպոսը (հոդվ. 1): Պատրիարքական ընտրությունների հարցը բարձրացվում էր նախորդ պատրիարքի մահվան, հրաժարականի կամ այլ պատճառով: Կ.Պոլսի պատրիարքին ընտրում էր Ազգային ընդհանուր ժողովը: Ընտրված էր համարվում այն թեկնածուն, որը հավաքել էր ձայների բացարձակ մեծամասնություն: Ձայների բացարձակ մեծամասնությունն չապահովվելու դեպքում երկու առավելագույն քվեներ ստացած թեկնածուները մասնակցում էին ընտրությունների երկրորդ փուլին՝ հարաբերական մեծամասնության սկզբունքով (հոդվ. 2): Նորընտիր պատրիարքը ստանձնում էր իր պարտականությունները միայն սուլթանի կողմից պաշտոնապես հաստատվելուց հետո՝ երդվելով հավատարիմ մնալ սահմանադրության հռչակած սկզբունքներին:

Պատրիարքն իրավունք չուներ ինքնուրույն լուծարել կամ փոփոխել Կրոնական և Քաղաքական ժողովների կազմը (հոդվ. 11): Իր պարտականությունները կատարելու և պատրիարքարանի ներքին ծախսերը տնօրինելու համար պատրիարքն ազգային բյուջեից ամեն ամիս ստանում էր որոշակի գումար (հոդվ. 12):

Ազգային սահմանադրությունը կանոնակարգում էր նաև պատրիարքին պաշտոնանկ անելու կարգը: Իբրև հիմք կարող էր ընդունվել պատրիարքի հակասահմանադրական ընթացքը (հոդվ. 5): Պատրիարքին պաշտոնանկ անելու հարց հարուցելու իրավունք ունեին Ընդհանուր ժողովը, Կրոնական և Քաղաքական ժողովները:

Ազգային սահմանադրությամբ ամրագրված ընտրական իրավունքի սկզբունքները համահունչ էին XIX դարի առաջադիմական իրավաքաղաքական գաղափարներին և արտահայտում էին նրա հեղինակների նվիրվածությունը համամարդկային արժեքներին: Սահմանադրության 65-րդ հոդվածով ազգային գործերի կառավարմանը մասնակցելու իրավունք տրվում էր տարեկան 75 դրշ. տուրք վճարող անձանց, որով փորձում էր արվում իրավական հիմք ստեղծել բյուջեի ձևավորման համար:

Սահմանադրության հեղինակները գույքային սահմանափակումները փորձում էին հաղթահարել ըստ անձնական արժանիքի ընտրական իրավունք շնորհելու սկզբունքով: Այդ իրավունքից օգտվում էին. «...արքունի դիւաններում և տէրութեան ուրիշ պաշտօններում մէջ գտնուողներ. վկայեալ բժիշկները. օգտակար գրքերու հեղինակները. դպրատանց ուսուցիչները, և ազգին օգտակար ծառայութիւններ մատուցած անձինք» [7] (հոդվ. 65): Իհարկե, սահմանադրական իրավունքի տեսանկյունից այդ սկզբունքը նորույթ էր և հնարավորություն էր տալիս ազգային գործերի կառավարմանը ներգրավել մտավորականությանը, որն այլ կերպ հազիվ թե կարո-ղանար մասնակցել ազգի քաղաքական կյանքին:

Սահմանադրության 67-րդ հոդվածի համաձայն ընտրական իրավունքից զրկվում էին քրեական հանցագործության համար դատապարտվածները, պայմանականորեն դատապարտվածները, վարկաբեկված և Ազգային ժողովի կողմից պարսավանքի ենթարկված անձինք, հոգեկան հիվանդները:

Սահմանադրությունը հաստատում էր տարիքային ցենզ: Այն ակտիվ ընտրական իրավունքով օժտում էր 25 տարին (հոդվ. 66), իսկ պասսիվ ընտրական իրավունքով 30 տարին լրացած անձանց (հոդվ. 68): Բացի տարիքից, երեսփոխանության թեկնածուն, որպես պասսիվ ընտրական իրավունքի կրող պետք է լիներ օսմանահպատակ, տերության օրենքներին տեղյակ, ազգային գործերում հմուտ, ունենար ընտրական իրավունք:

Այսպիսով, Ազգային սահմանադրությունը կարգավորում էր ազգի մշակութային, կրոնական ու հասարակական գործերը: Այն իրավականորեն ձևակերպում էր ժողովրդի և նրա առաջադեմ մտավորականության պայքարի արդյունքները հայ հանրության վարչությունը ազատականացնելու, նրա

մտավոր ու մշակութային զարգացումը ապահովելու ասպարեզում: Սահմանադրության շնորհիվ հայությունն իր ազգային-վարչական մարմինները կազմակերպում է քաղաքակիրթ հանրության իրավական նորմերի շրջանակներում, Կ.Պոլսում և արևմտահայ գավառներում ստեղծվում են ազգային բազմաթիվ դպրոցներ, մշակութային, կրթական ու հասարակական կազմակերպություններ:

Օգտագործված գրականություն

1. Տե՛ս Այվազովսքի Գ.,Պատմութիւն Օսմանեան պետութեան, հ.2, Վենետիկ, 1841, էջ 269-270:
2. Լէօ, Թիւրքահայ յեղափոխութեան գաղափարաբանութիւնը, հ.Ա, Փարիզ, էջ 39:
3. Տե՛ս Ազգային Սահմանադրութիւն Հայոց, Կ.Պոլիս, 1860, էջ 20-21:
4. Տե՛ս Ատենագրութիւնք Ազգային Ժողովոյ (1860-1870թթ.), Կ.Պոլիս, 1890, էջ 29-35:
5. Տե՛ս Խառատյան Ա., Դարձյալ արևմտահայերի ազգային սահմանադրության մասին: Պատմա-բանասիրական հանդես, Երևան, 2008, թիվ 2, էջ 87:
6. Տե՛ս Ազգային Սահմանադրութիւն Հայոց, Կ.Պոլիս, 1863, էջ 13:
7. Նույն տեղում, էջ 42:

In the second half of the 19th century, in the Turkish society, within the context of social reforms, the formation of national bodies and provision of legal status became an urgent issue for the Western Armenians. First of all, it was about the National Constitution and, as a result, about the national administration. The National Assembly, a kind of Parliament, with its elected deputies, was held for the first time in the Armenian reality in regard with the national affairs of Western Armenian Community and internal issues. The National Constitution has left its tangible trace on the Armenian social and political thought, increase of the national consciousness and enrooting of democratic-parliamentary ideas. In the person of the National Constitution, a new national administrative structure had access to the reality of Western Armenians, where the vital issues concerning the Armenians were carefully raised. The idea was to what extent the national authorities could succeed in the implementation.

The assessment of the activities of the Western Armenian National Assembly is one of the most important issues of our historiography. This issue was touched upon in Soviet historiography within the context of Armenian spiritual, social, political and cultural activities, but mainly with the tendency to underestimate the role and importance of that national institution in the history of our people.